ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արմսնաբ ՍՊԸ-ն ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/32 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Արմինե Նահապետյան ԱՁ	Արմինե Նահապետյան ԱՁ	Կանացի կոստյում տաբատով 197 լրակազմ Կոստյումը բաղկացած է կանացի պիջակից, կանացի տաբատից և երկարաթև կանացի վերնաշապիկից: Պիջակի և տաբատի կտորների գույնը մուգ կապույտ է, իսկ վերնաշապիկինը՝ սպիտակ / գույների երանգները նախապես պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ/: Մուգ կապույտ կտորի բաղադրությունը 38-42 % բամբակ, 58 – 62 % պոլիէսթեր: Կտորի մակերեսային խտությունը 245 գ/մ2 ± 3%: Սպիտակ վերնաշապիկի կտորի բաղադրությունը 33-37 % բամբակ, 63-67 % պոլիէսթեր է: Կտորի մակերեսային խտությունը 180 գ/մ2 ± 3%: Կոստյումի գծային չափսերի փոփոխությունը թաց մշակումից և / կամ քիմ մաքրումից հետո չպետք է գերազանցի առավելագույն ± 3% շեղումը: Պիջակը դասական ոճի է ուղիղ ձևվածքով, երկլանջ ծալովի օձիքով: Պիջակի լանջերը շիտակ կողմից՝ արտաքինից մշակվում են ռելիեֆային կոնտուրներով: Ներսի մասը ամբողջությամբ մշակվում է սև կամ մուգ կապույտ գույնի մետաքսյա աստառով, որի մակերեսային խտությունը չպետք է պակաս լինի 55 գ/մ2 –

			ից: Պիջակի լանջերը և օձիքը մշակվում են հաստ ինքնասոսնձվող կտորով՝ դուբլիրինով և վուշ-բրդյա քաթանով, իսկ ուսերի հատվածում տեղադրվում են բարձիկներ: Լանջերի եզրերը լրացուցիչ մշավում է ինքնասոսնձվող տիսմայով: Կոճկումն իրականացվում է երկու հատ կլոր ոսկեգույն կոճակներով: Ոսկեգույն կոճակների տրամագծի եզրը մշակվում է պարանանման հյուսքով, իսկ մեջտեղի հատվածը՝ գերբանման ձևավոր պատկերով: Պիջակն ունի կողային երկու ներկարված գրպան՝ կափույրներով, մեկ ներկարված ծոցագրպան: Գրպանները մշակվում են սև կամ մուգ կապույտ գույնի մետաքսյա աստառով, որի մակերեսային խտությունը չպետք է պակաս լինի 55 գ/մ2 – ից: Ծոցագրպանի մուտքը մշակվում է կտորի գույնին համապատասխան երիզով: Պիջակի ձախակողմյան լանջին՝ ռեհեֆային կոնտուրի վերին հատվածում, ասեղնագործվում է Երևանի Մետրոպոլիտենի տարբերանշանը՝ պատկերի համաչափության պահպանմամբ: Պիջակի դետալների միացումն իրականացվում է երկկար փակ կարերով՝ հատուկ փակ կարի մեքենայով: Տաբատը դասական ոճի: Կոճկումն իրականացվում է մեկ կոճակով և շղթայով: Ունի երկու ներսի գրպան և մեկ գրպան ետնամասում՝ թաքնվող կափույրով: Գրպանները մշակվում են սև կամ մուգ կապույտ գույնի մետաքսյա աստառով, որի մակերեսային խտությունը չպետք է պակաս լինի 55 գ/մ2 – ից: Տաբատի դետալների միացումն իրականացվում է երկկար փակ կարերով՝ հատուկ փակ կարի մեքենայով, իսկ փողկերը ծալվում կարվում են գաղտնակարով՝ հատուկ գաղտնակարի մեքենայով: Վերնաշապիկը կարվում է սպիտակ գույնի կտորից: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով, կափույրով և շերտակարով վրադիր գրպաններով: Օձիքը ծալովի, թևքերը երկար, ներկարված բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Վերնաշապիկի բոլոր դետալների միացումն իրականացվում է երկկար փակ կարերով՝ հատուկ փակ կարի մեքենայով:

			Ապրանքը պետք է լինի նոր Յուրաքանչյուր աշխատակցի համար պահանջվում է կարի անհատական մոտեցում՝ կախված վեջինիս ֆիզիկական կառուցվածքի առանձնահատկություններից: յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար, անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի պահանջով մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ներառված բոլոր բաղկացուցիչները՝ ձևերը պետք է ունենան միևնույն գունային գամման: ապրանքների փաթեթավորումը՝ լրակազմով, պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը, քանակը, չափսերը, խնամքի վերաբերյալ տեղեկատվությունը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Армснаб в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/32 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
1			